ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի փետրվարի 3-ից 8-ը Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն (քաղաք Լոնդոն) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝**

   Ռուստամ Բադասյան - ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի նախագահ

2. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

   Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն (քաղաք Լոնդոն), 2024թ. փետրվարի 3-ից 8-ը

3. **Հրավիրող կողմը՝**

   ‹‹Էքսպերտիզ Ֆրանս›› կազմակերպություն

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝**

   Խաղային ոլորտի կարգավորման միջազգային առաջավոր փորձի, կիրառվող նոր տեխնիկական չափանիշների, ոլորտի առկա հիմնախնդիրների և դրանց հնարավոր լուծումների ուսումնասիրում, Հայաստանի Հանրապետությունում խաղային ոլորտի գործունեության կարգավորման վերանայման հնարավորության դիտարկում, խաղային գործունեության կարգավորման նպատակով խաղային ոլորտի կարգավորման օպերատորի և Էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրում:

5. **Քննարկված թեմաները՝**

   Այցի ընթացքում քննարկվել են խաղային սարքավորումների, կիրառվող տեխնիկական և ծրագրային ապահովման միջոցների (խաղային արտադրանքների) պարտադիր չափորոշիչների (ստանդարտների) ներդրման և խաղային գործունեության կարգավորման օպերատորի և մոնիտորինգային կենտրոնի հիմնման հնարավորությունների վերաբերյալ հարցեր:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

ICE LONDON ցուցահանդեսի շրջանակներում կայացել են մի շարք հանդիպումներ և աշխատանքային քննարկումներ տարբեր երկրների ոլորտը կարգավորող մարմինների ղեկավարների, ինչպես նաև ոլորտի առաջատար ընկերությունների ներկայացուցիչների հետ:

Այցի շրջանակում ուսումնասիրվել է ոլորտի կարգավորման միջազգային փորձը, ոլորտում կիրառվող նոր տեխնիկական չափանիշները և տեխնոլոգիաները: Հանդիպումների ընթացքում տեղի են ունեցել մտքերի փոխանակումներ Հայաստանի Հանրապետությունում խաղային գործունեության կարգավորման նպատակով ներդրվող էլեկտրոնային կառավարման համակարգի և խաղային արտադրանքների համար պարտադիր տեխնիկական ստանդարտների սահմանման շուրջ:

Առանձին երկկողմ հանդիպում է կայացել Gaming Laboratories International ընկերության ներկայացուցիչների հետ, որոնք նաև հանդիսանում են ‹‹Էքսպերտիզ Ֆրանս›› կազմակերպության կողմից ներգրավված փորձագետներ քննարկվող նախաձեռնության շրջանակներում ՀՀ-ին աջակցություն տրամադրելու համար: Ձեռք է բերվել պայմանավորվածություն փորձագիտական եզրակացություն ստանալու նպատակով խաղային գործունեության կարգավորման մասին նախագծի վերջնական տարբերակը թարգմանելու և վերջիններիս ներկայացնելու մասով:

Կայացել են մի շարք առանցքային հանդիպումներ Մեծ Բրիտանիայի հարկային և մաքսային վարչարարություն իրականացնող մարմնի՝ Նորին Գերազանցության Եկամուտների և Մաքսային ծառայության ղեկավար Ջիմ Հարրայի և գլխավոր տնօրեն Ջոնաթան Էթոուի հետ, որոնց ընթացքում քննարկվել են խաղային ոլորտի կարգավորումները, կրիպտոարժույթների ակտիվների հարկման ընթացակարգերը, ինչպես նաև Միասնական հաշվետվողական ստանդարտի (CRS) հետ կապված վարչարարական հիմնախնդիրները: Միաժամանակ քննարկվել են Հայաստանում խաղային գործունեության կարգավորման նպատակով ներդրվող էլեկտրոնային կառավարման համակարգի և խաղային արտադրանքների համար պարտադիր տեխնիկական ստանդարտների սահմանման հետ կապված հիմնախնդիրները: Ն.Գ.

Եկամուտների և Մաքսային ծառայության պատասխանատուների կողմից ներկայացվել են նշված ուղղություններով օրենսդրական կարգավորումների՝ Միացյալ Թագավորության փորձը, որն էական նշանակություն ունի Հայաստանում նշված համակարգերի ներդրումն ապահովելու տեսանկյունից:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Քննարկումների ժամանակ փաստաթղթեր չեն ստորագրվել, որոշ ընկերությունների, այդ թվում՝ Gaming Laboratories International ընկերության ներկայացուցիչների հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն Հայաստանի Հանրապետության խաղային ոլորտի օրենսդրության վերանայման շրջանակներում հնարավոր խորհրդատվության տրամադրման մասով:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝**

Կարևորելով խաղային ոլորտի կարգավորման միջազգային առաջավոր փորձը՝ նախատեսվում է ՀՀ-ում իրականացնել խաղային ոլորտի նոր բարեփոխումներ և կարգավորումներ, մասնավորապես, աջակցել ՀՀ Կառավարության կողմից հավանության արժանացած «Խաղային գործունեության կարգավորման մասին» ՀՀ օրենքի նախագծի ՀՀ Ազգային ժողովում քննարկման գործընթացին: Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է ունենալ խաղային գործունեության կազմակերպիչների շրջանառության իրական պատկեր, որոշակի խոցելի խավի համար սահմանել խաղալու սահմանափակումներ կամ արգելքներ, միաժամանակ ներդնել արդար ու պատասխանատու խաղի կանոններ:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

Ռուստամ Բադասյան

13.02.2024 թ.

Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018թ. սեպտեմբերի 19-ի
N1230-Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը՝ **ՀՀ պետական եկամուտների կոմիտե**
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը՝ **20-Ա**
3. Անունը, ազգանունը,զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

Ռուստամ Բաղասյան ՀՀ ՊԵԿ նախագահ

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման վայրը՝ **Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն՝ քաղաք Լոնդոն**
5. Գործուղման ժամկետները՝ **03.02.2024-08.02.2024թթ.**
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ **Հրավիրող կողմի միջոցների հաշվին**

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝ **ճանապարհածախս,գիշերավարձ, օրապահիկ**
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)
ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)
☐ ա.փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը
☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Անուն,ազգանուն*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)		
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	0	**0**
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)		
	Օրերի քանակը		
	Ընդամենը (դրամ)	0	**0**
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)		
	Օրերի քանակը		
	Ընդամենը (դրամ)	0	**0**
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Պաշտոնական պատվիրակությունների սրահից օգտվելու ծախս		
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		0	**0**

Գլխավոր ֆինանսիստ _____ ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

14.02.2024թ.